

ՀՐԱԶՅԱ ԳՐԻԳՈՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծնվել է 1935թ. հունվարի 28-ին Երևանում:

1943-1953թթ. սովորել է Երևանի Չկալովի անվան թիվ 30 միջնակարգ դպրոցում:

1953-1959թթ. սովորել է Երևանի Կ. Մարքսի անվան պետական պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի ճարտարապետության բաժնում:

1959 թվականից <<Հայպետնախագիծ>> ինստիտուտի ճարտարապետ է, 2004 թվականից՝ ճարտարապետների հայկական ինստիտուտի վարչության անդամ:

1964 թվականից Հայաստանի ճարտարապետների միության անդամ է:

1975-1985թթ. եղել է Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահի տեղակալ:

1979-1988թթ. եղել է <<Հայպետնախագիծ>> ինստիտուտի N 6 ճարտարապետական արվեստանոցի ղեկավար:

1988 -1993թթ. եղել է <<Հայպետնախագիծ>> ինստիտուտի տնօրեն:

1992 թվականից Միջազգային ճարտարապետության ակադեմիայի Մոսկովյան մասնաճյուղի թղթակից անդամ է:

1994 թվականից Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս է:

1997 թվականից <<ԱՄԴ>> ՍՊԸ-ի տնօրենն է:

1998 թ.-ից Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինության խորհրդի անդամ է:

1999 թ.-ից Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի ղոցենտ է:

2000 թ.-ից Մայր աթոռ Սուրբ Էմջիածնի ճարտարապետական խորհրդի անդամ է:

1975թ.՝ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի մրցանակի դափնեկիր (<<Ռոսիա>> կինոթատրոնի նախագծի համար), նույն թվականին արժանացել է ՀՀ վաստակավոր ճարտարապետի կոչման:

1983թ.՝ ՀամԼԿԵՄ կենտրոնական կոմիտեի մրցանակի դափնեկիր (Երիտասարդական պալատի նախագծի համար):

1985թ.՝ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (Դիլիջանում կինեմատոգրաֆիստների ստեղծագործական տան նախագծի համար):

1985թ.՝ <<Ինտեր Արխ>> ճարտարապետական Բիենալե՝ <<Գրան Պրի>> մրցանակի դափնեկիր (Բուլղարիա, Սոֆիա՝ Գորիսում բնակելի թաղամասի համար):

1987թ.՝ ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (Մարզահամերգային համալիրի նախագծի համար):

100-ից ավելի ճարտարապետական նախագծերի հեղինակ է:

